

**Կոնսոլ** եւ իր *դրապաշտութիւնը* ունեցան իրենց հետեւորդները: Այս դպրոցին կը պատկանին անգլիացի ընկերաբան-փիլիսոփաներ՝ **Ջ. Ս. Միլ** (John Stuard Mill, 1806 – 1973 թ.) ու **Հ. Սպենսեր** (Herbert Spencer, 1820 – 1903 թ.) եւ աստորիացի բնագետ-փիլիսոփայ՝ **Է. Մախ** (Ernst Mach, 1838 – 1916 թ.):

**Կոնսո** փորձեց ժամանակուան ընկերային կարգերը յարմարեցնել դարու գիտական զարգացումին: Իսկ բարոյագիտութեան մարզէն ներս ան կը հռչակէ *Դրական կրօնք* մը (Positive Religion), որ հիմնուած է մարդասիրութեան (Philanthropy) կամ այլասիրութեան (Altruism) վրայ: Կոնսոի հիմնական տեսութիւնը՝ մարդկային հոգեմտաւորական զարգացման «*երեք փուլերու օրէնք*»ն է, հետեւեալ ձեւով.-

- ա) **Աստուածաբանական** (Theological կամ մտացածին) փուլ, երբ մարդ իր շրջապատի երեւոյթները կը բացատրէ, որպէս գերբնական Եուրթեան գործ եւ կոյր հաւատք կ'ընծայէ.
- բ) **Բնագանգական** (Metaphysical կամ վերացական) փուլ, որ նախորդ փուլի քողարկուած ձեւն է, երբ մարդ գերբնական Եուրթիւնները կը փոխարինէ՝ վերացականով: Եւ վերջապէս կը յանգի՝
- գ) **Գիտական** (Scientific կամ դրական) փուլին, երբ մարդ կը ձերբազատուի գերբնականն ու վերացականը փնտռելէ եւ կը կեդրոնանայ միայն գոյութիւն ունեցող իրողութիւններու վրայ:

**Ջ. Ս. Միլ**, կը շարունակէ ու կը զարգացնէ Կոնսոի տեսութիւնը, ինչպէս նաեւ իր հօր **Ջ. Միլի** (James Mill, 1773 – 1836 թ.) եւ **Ե. Բենթամի** (Jeremy Bentham, 1748 – 1832 թ.) բարոյագիտութեան օգտապաշտական<sup>(32)</sup> ուղին: Այս մարզին մէջ, **Ջ. Ս. Միլի** գլխաւոր երկը, 1861 թուականին հրատարակուած՝ «*Օգտապաշտութիւն*»ն է („Utilitarianism“), որու բնորոշող նպատակն է.- «*առաւելագոյն չափով երջանկութիւն՝ առաւելագոյն թիով մարդոց համար*» կամ «*գերագոյն երջանկութիւնը, բազմաթիւ մարդոց համար*» նշանաբանը: Մինչ Բենթամի համաձայն *առաւելագոյնը* քանակական իմաստ ունի, **Ջ. Ս. Միլ** կը շեշտէ անոր որակական իմաստն ու արժէքը: Ասոր կողքին, որոշ դեր կը վերապահուի նաեւ անհատական ազատութեան եւ արդարութեան, իր բաշխողական իմաստով:

**Հ. Սպենսեր**, բարեշրջապաշտական (Evolutionism) գաղափարներով կը կազմէ իր օգտապաշտական բարոյագիտութիւնը: Սպենսեր, նկատի առնելով մարդու ինքնապահպանման (Self-preservation) բնագործ եւ ընկերութեան մը մէջ ապրելու կարեւորութիւնը՝ կ'եզրակացնէ, որ բարոյագիտութիւնը կը բացայայտուի միայն այն պարագային, երբ մարդ ընկերութեան մէջ ապրելով իր ինքնապահպանումը ապահովէ: Այս մարզին մէջ իր գլխաւոր երկը կը նկատուի, «*Բարոյագիտութեան սկզբունքները*» („Principles of Ethics“, 1879 –

---

(32) **Օգտապաշտութիւն** (Utilitarianism), փիլիսոփայական ուղղութեան մասին, տես՝ Մաս – 5, էջ 182: